

2. Արիստոտել

Սոկրատեսի եւ Պլատոնի գաղափարապաշտութեան կը հակադրուի յոյն դասական փիլիսոփայ Արիստոտելի գործնական փիլիսոփայութիւնը:

Արիստոտել կը հաստատէ բարոյագիտութիւնը (Ethics), որպէս եզր եւ զայն կը դարձնէ իւրայատուկ փիլիսոփայական ճիւղ՝ տրամաբանութեան (Logics), բնագիտութեան (Physics) եւ բնագանցութեան (Metaphysics) կողքին:

Արիստոտել, «*Նիկոմախոսի բարոյագիտութիւն*» (յուն.՝ „*êthika nikomacheia*“, տե՛ս Մաս – 5, Էջ 196) երկին մէջ կը քննարկէ իր միջավայրի բարոյականութիւնը, կենսապայմանները, սովորութիւններն ու հաստատութիւնները եւ կը փորձէ անոնցմէ բարոյական սկզբունքներ եզրակացնել: Իւրաքանչիւր անհատ կը ցանկայ հասնիլ *Գերագոյն Բարիին*, որ նոյնինքն անհատական երջանկութիւնն է եւ որուն կարելի է հասնիլ միայն առաքինութեան ճամբով:

Մարդկային վարմունքին կամ յոյգերուն մէջ, Արիստոտել կը փնտռէ չափաւոր «միջինը», որ առօրեայ իրականութեան մէջ բարոյասէր մարդուն համար իրագործելի ըլլայ եւ ասիկա որպէս չափանիշ կ'որակէր՝ *ոսկեայ միջին*: Օրինակ, Արիստոտելի համար արիութիւնը ոսկեայ միջինն է՝ վայրագութեան եւ երկչոտութեան:

Արիստոտելեան գործնական այս գաղափարը, որուն իմաստն ու նպատակը առօրեայէն կը բխի, պէտք է աղերս ունենայ հիմնական գիտութեան մը հետ, որ իր կարգին կը բացայայտէ *Գերագոյն Բարիի* հարցը. թէ մեզի համար ի՞նչ է *Գերագոյն Բարին* եւ մեր գործնական վարմունքին համար նպատակի ի՞նչ հորիզոն կը տեսնենք. ահա այս հորիզոնը պէտք է բանականօրէն համոզիչ ըլլայ, որով բարոյագիտութեան մեկնակէտը, որպէս պարտաւորութիւն, կարենայ կիրառելի դառնալ:

Արիստոտելի բարոյագիտութեան մասին յատուկ անդրադարձութիւններ կան Մաս – 5ի «Առաքինութեան բարոյագիտութիւն» բաժնին մէջ (Էջ 193):

